Արձանագրություն N 4

«ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» «հոկտեմբեր» 2018թ.

ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ Է.Միրոյան, Կ.Մկրտչյան, Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

Բացակայում էին՝

1. «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթներով՝ քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցել է՝ «Եվրոֆարմ» ՍՊ, «Արմֆարմացիա» ՓԲ, «Նատալի Ֆարմ» ՍՊ և «Ֆարմ Թրաստ» ՍՊ ընկերություններին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունները:

1.2 Սահմանված ժամկետում.

- «Ֆարմ Թրաստ» ՍՊ ընկերությունը, համակարգի միջոցով ներկայացրել է գնահատող հանձնաժողովին ուղղված գրություն, /ԱՀՔ քաղվածք/taxservice.am/, ինչպես նաև թղթային ձևով ՀՀ ՊԵԿ-ից ստացված պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, համաձայն որի ընկերությունը, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 24,660 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն՝ դրոշմանիշային վճարների մասով, որն էլ ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 16.10.2018թ. տրամադրված տեղեկատվության, հանդիսանում է եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:
- «Եվրոֆարմ» ՍՊ, «Արմֆարմացիա» ՓԲ, «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությունները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

1.3 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

- մերժել «Ֆարմ Թրաստ» ՍՊ ընկերության հայտը /N 11, 12 չափաբաժիններ/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ N 11-րդ, 12-րդ չափաբաժինների մասով հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ չկան, վերոհիշյալ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայտարարվում են չկայացած:
- N1-ին, 21-րդ, 25-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Արմֆարմացիա» ՓԲ ընկերությանը, N 2-րդ, 10-րդ, 22-րդ մասով ընտրված մասնակից ճանաչել «Եվրոֆարմ» ՍՊ ընկերությանը, N3-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 24-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ չափաբաժինների մասով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1 Ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով՝ անգործության ժամկետ *չսահմանել* և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերության հետ կնքել գնման պայմանագիր N 5, 6, 9, 15, 16, 17, 18, 24, 29, 31, 32-րդ չափաբաժինների մասով:

2.2 Ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով անգործության ժամկետ *սահմանել*՝ «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերության N 3-րդ չափաբաժնի մասով, «Արմֆարմացիա» ՓԲ ընկերության հետ N1-ին, 21-րդ, 25-րդ չափաբաժինների մասով, «Եվրոֆարմ» ՍՊ ընկերության՝ N 2-րդ, 10-րդ, 22-րդ չափաբաժինների մասով: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ «Արմֆարմացիա» ՓԲ, «Նատալի Ֆարմ», «Եվրոֆարմ»

ՍՊ ընկերությունների հետ կկնքվի գնման պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ.Դանիելյան

Անդամներ՝ _____ Է.Միրոյան

_____ Կ.Մկրտչյան

_____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան